ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Գեղարքունիքի մարզ Վարդենի համայնքի թիվ 1 մանկապարտեզի չգործող երկհարկանի մասնաշենքի հիմնանորգման նախագծի և շրջակա միջավայրի վրա ազդեցության վերաբերյալ հանրային քննարկում

2024 թվականի հուլիսի 7-ին ժամը 14:00 համաձայն «Շրջակա միջավայրի ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի /21.06.2014թ. ՀՕ-110-Ն/ և ՀՀ կառավարության 19.11.2014թ. N1325- Ն որոշմամբ սահմանված կարգի տեղի ունեցավ Գեղարքունիքի մարզի Վարդենիս համանքի թիվ 1 մանկապարտեզի չգործող երկհարկանի մասնաշենքի հիմնանորգման նախագծի և նախատեսվող գործունեության շրջակա միջավայրի վրա ազդեցության հանրային քննարկումը (1-ին փուլ)։

Հանրային քննարկման մասին հայտարարությունը սույն թվականի մայիսի 30-ին տեղադրվել է Առավորտ օրաթերթում և Ազդարար իրազեկման կայքում։

Ծրագրի անվանում՝ Վարդենիս համայնքի Վարդենիսի թիվ 1, թիվ 2 Ակունք և Նորակերտ բնակավայրերի մանկապարտեզների կապիտալ նորոգում և գույքի ձեռքբերում

Ծրագրի իրականացման կազմակերպություն՝ Վարդենիսի համայնքապետարան

<u>Մասնակցում էին</u>

Ա. Եղիազարյան	Վարդենիս համայնքի ղեկավարի օգնական
Ա. Մկրտչյան	Վարդենիս համայնքապետարանի աշխատակազմի գնումների, զարգացման ծրագրերի, տուրիզմի, առևտրի, սպասարկման և գովազդի բաժնի պետ
Ա. Աբգարյան	Վարդենիս համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության, հողօգտագործման և հողաշինության բաժնի պետ
Ռ.Զաքարյան	Վարդենիս համայնքապետարանի աշխատակազմի գնումների, զարգացման ծրագրերի, տուրիզմի, առևտրի, սպասարկման և գովազդի բաժնի առաջատար մասնագետ

Ելույթ ունեցան

Բացման խոսքով հանդես եկավ Ա. Եղիազարյանը նշելով, որ մասնաշենքի հիմանորոգման արդյունքում նախադպրոցական ուսումնական հաստատությունը ծառայությունը կմատուցի առավել բարեկարգ պայմաններում: Ա. Աբգարյանը նշեց, որ մանկապարտեզի շենքում վերանորոգման աշխատանքներն իրականացնելիս պահպանվելու են հենաշարժողական խնդիրներ ունեցող և տեղաշարժման սակավ հնարավորություններ ունեցող անձանց համար համապատասխան պայմանները:

Մասնակիցները բարձրացրեցին իրենց հարցերը:

1. **Հարց**: Քանի՞ երեխայի համար է նախատեսված մանկապարտեզի նոր կառուցվող մասնաշենքը

Պատասխան: Նոր կառուցվող մասնաշենքը հնարավորություն կտա թիվ 1 մանկապարտեզների սաների ներկա թիվ հասցնել մինչև 170-ի

2. **Հարց**: Շինարարությունը ե՞րբ է ավարտվելու

Պատասխան: Շինարարությունը ավարտվելու է մինչև 2026 թվական

3. **Հարց**: Արդյո՞ք նոր մասնաշենքի կառուցումը հնարավորություն կտա մանկապարտեզին դառնալ երկարօրյա:

Պատասխան: Նախատեսվում է մասնաշենքը դարձնել երկարօրյա

Զեռնարկող

Վարդենիսի համայքապետարան Վարդենիս համայնքապետարանի աշխատակազմի գնումների, զարգացման ծրագրերի, տուրիզմի, առևտրի, սպասարկման և գովազդի բաժնի պետ
Ա.Մկրտչյան

Վարդենիս համայնքի ղեկավար

Ա. Խաչատրյան

Արձանագրության կցվում է հանրային քննարկման մասնակիցների ցանկը՝ համապատասխան ստորագրություններով